ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ ՄԻ ՇԱՐՔ ՆՈՐԱԿԱԶՄ ԲԱՌԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ
ավագ գիտաշխատակից, բ.գ.թ.
Susanna7494@gmail.com
DOI: 10.57236/1829-0183-2023.2(29)-92

Համառոտագիր

Գրիգոր Տաթևացու գրական ժառանգության նորակազմ բառերի քննությունը հետաքրքիր է ինքնին, սակայն հեղինակի գործածած նոր բառերը հետաքրքիր են նաև այդ հասկացությունների նրբիմաստների ժամանակակցի ընկալման և մեկնաբանման առումով: Դրանք երբեմն պատմական տեղեկություն են պարունակում, ինչպես ունենք օրհնության կարգի հետ կապված նորակազմ բառերի դեպքում, որոնք մեծ մասամբ վկայված չեն գրաբարյան բառարաններում:

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ նորակազմ բառեր, համագործածական բառեր, ծիսակրոնական հասկացություններ, երաժշտական հասկացություններ, բժշկագիտական հասկացություններ, իմաստային քննություն:

SEMANTIC STUDY OF GRIGOR TATEVATSI'S NEWLY WORDS.

SUSANNA GRIGORYAN
Candidate of Philological Sciences
National Academy of Sciences of the Republic of Armenia
Senior Researcher
Susanna7494@gmail.com

Abstract

Sometimes they contain historical information, as in the case with newly formed words related to the order of blessing, and for the most part these words are not attested in Grabar dictionaries.

Key words and phrases: new words, collaborative words, ritualistic concepts, musical concepts, medical concepts, semantic examination.

СЕМАНТИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ НОВЫХ СЛОВ ГРИГОРА ТАТЕВАЦИ

СУСАННА ГРИГОРЯН
Кандидат филологических наук
Национальная Академия наук РА
Старший научный сотрудник
Susanna7494@gmail.com

Аннотация

Рассмотрение новых слов литературного наследия Григора Татеваци интересно само по себе, но новые слова, использованные автором, чрезвычайно интересны и с точки зрения современного восприятия и интерпретации нюансов этих понятий. Иногда они содержат исторические сведения, как это имеет место в случае с новообразованными словами, относящимися к порядку благословения, и по большей части эти слова не засвидетельствованы в словарях древнеармянского языка.

Ключевые слова и **словосочетания:** новые слова, общеупотребительные слова, ритуальные понятия, музыкальные понятия, медицинские понятия, семантическая экспертиза.

Ներածություն

Գրիգոր Տաթևացին գրեթե իր բոլոր աշխատություններում մի կողմից ամփոփել է Սուրբ գրային մեկնությունները, մյուս կողմից՝ բերել նոր երանգներով հարստացած հեղինակի իր խոսքը: Նրա մեկնությունները հայերենի ճկուն լեզվամտածողության դրսևորում են, հանգամանք, որը Գրիգոր Տաթևացու գրական ժառանգության արժեքավոր կողմերից մեկն է:

Մի շարք հեղինակներ, Հ. Աճառյանը և այլք [3; 5; 8; 7], որոնք իրենց աշխատություններով համալրել են գրաբարյան բառարանները, բազմաթիվ անգամ հղում են Տաթևացու բառագործածություններին և բառամեկնություններին, որը դարձյալ հաստատում է որոշակի բառերի՝ Տաթևացու հեղինակած լինելու փաստը: Այսպես օրինակ, Լ. Հովհաննիսյանի «Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր» աշխատության մեջ (այսուհետև՝ ԼՀԳԲ) *ախթարմայ. անհատողութիւն, առնչական, բացբարձութիւն, կոպիտ, միջակօրէն, պատարագելի, փոխարկապէս* բառերի դեպքում հղում է Տաթևացուն [7]: Ռ. Ղազարյանի, Հ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարան»-ի (այսուհետև՝ ՄՀԲ) դեպքում այդ հղումները հասնում են շուրջ հարյուրի:

Հ. Աճառյանը «Հայերէն արմատական բառարան»-ում (այսուհետև՝ ՀԱԲ) Տաթևացու բառերին հղելիս գործածում է բառերի բացատրության բոլոր մոտեցումները, այսինքն՝ բուն բացատրության կողքին Տաթևացու գործածությամբ իր բառերով՝ կա՛մ «ճշտում է բառի նշանակության նրբություններ», կա՛մ վերականգնում է ենթադրելի ճիշտ բառաձևը, կամ էլ այն բերվում է իբրև ժամանակակցի վկայություն, մի բան, որ ոչ բոլոր հեղինակների պարագայում է կիրառելի եղել: Ըստ էության, սա մի փաստ է, որ գրաբարյան բառանյութի պարագայում ի դեմս Տաթևացու Աճառյանը նկատել է վստահելի գիտակին:

Տալով հայ մատենագիտության հայտնի շրջանաբաժանումը՝ Աճառյանը հատուկ ուշադրություն է հրավիրում, որ հայ մատենագրության հինգ շրջաններից միայն երկուսի՝ ոսկեդարյան շրջանի և հետոսկեդարյան շրջանի բառերն են ընդգրկվել ՀԱԲ-ում, այսինքն՝ բառարանում ընդգրկելով Տաթևացու գրական ժառանգության բառանյութը՝ հայագետն ընդհանրապես կասկածելու տեղ չի թողնում, որ այս հեղինակի գրական ժառանգության բառանյութը «ոսկեդարեան» կամ՝ «հետոսկեդարեան» շրջանին է պատկանում՝ դրանով իսկ ցույց տալով իր անհամաձայնությունը «Նոր հայկազեան բառարանի» հեղինակներին, որոնք Տաթևացու ոճը ժամանակին բնութագրել են «ստորին» [6]:

Սրա հետ մեկտեղ, անգամ Հ. Աճառյանի «Հայերէն արմատական բառարան»-ում կան դեպքեր, երբ վիճելի հարցերի դեպքում հաստատապես կարելի է վստահել Տաթևացու տեսակետին: Օրինակ՝*տօնահմայք* բառը Տաթևացին բերում է որպես «թերափիմք» բառի բացատրություն՝ «*գուշակության, դյութի, հմայության համար գործածվող իր*» իմաստով: «Այլ և թերափն՝ իղձք ասէ և թերափիմք՝ տօնահմայք» [1, 425]: Երեմիա Մեղրեցին «Բառգիրք հայոց»-ում [11] նույնպես «թերափիմ» բացատրում է «տօնահմայս»: Հ. Աճառյանը, ապա նաև Ստ. Մալխասյանցը *թերափիմ* բառի բացատրության մեջ նախնիների «տօնահմայք» բացատրությունը համարում են սխալ, քանի որ այն, ըստ Աճառյանի, եբրայերենից թարգմանաբար նշանակում է «*մարդանման կերպարանքով տնային կուռք*», ըստ Մալխասյանցի՝ «*մարդակերպ տնային կուռք*»: Վերջինս բերում է «տօնահմայք»-ի առանձին բացատրություն, սակայն հարցականով, այն է՝ «*հմայութեան տօն*»: Փաստորեն, չունենալով «տօնահմայք»-ի հստակ բացատրություն՝ նախկին տեսակետները սխալ են համարվել: Տաթևացու բացատրությունը հետևյալն է.բերում ենք ամբողջությամբ. «Եփուտն

հոմանուն է, քանզի կոչի ուսանոց և կոչի վիճակ: Այն, որ ուսանոց է, որպէս վակաս քահանային, և որպէս մայրն Սամուէլի արար: Եվ այն որ վիճակն է, ծիրանեգոյն հանդերձ է, որ սեղան հացին և զխնկոցն ծածկէին. և տեսություն և փրկութիւն թարգմանի: Իսկ *թերափն է բոլորակ հանդերձ ծածկոյթ տապանակին*: Եւ զայս *գործի հմայութեան առնէին* և քավութիւն թարգմանի: Այլ և թերափն՝ իղձք ասէ և թերափիմք՝ *տօնահմայք* [1, 425]»:

Սա ծիսակրոնական մի հատված է, որտեղ կան տասնյակից ավել ծիսական հասկացություններ, պատմական տեղեկություն ուսանոցի կամ քահանայի վակասի մասին և վերջապես տրվում է հստակ բացատրություն «թերափ»-ի և նրա կիրառության վերաբերյալ. շրջանաձև կտորը, որով ծածկվել է տապանակը, կոչվել է «թերափ», ինչով և (*հավանաբար, տոն օրերին*) կատարվել են հմայություններ («Եւ զայս գործի հմայութեան առնէին»), և հավանաբար «հմայութեան գործի» առնողները կոչվել են «տօնահմայք»: «Գրաբարի հոմանիշների բառարան»-ում կարդում ենք. «իղձ - 1. ըղձապատում, հարցուկ, կախարդ, դիւթ. 2. յոգն. - ըղձութիւն, դիւթութիւն, գուշակութիւն, հմայութիւն, հմայք» [9, 300], որով էլ բացատրվում է «*թերափն՝ իղձք ասէ*» արտահայտությունը:

Կան նորակազմ բառեր, որոնք չնայած Հ. Աճառյանի բառարանում հիշատակվում են որպես նոր, սակայն հղում չկա Տաթևացուն, օրինակ՝ *բաժանելի* բառի դեպքում, որը սակայն, Տաթևացին ոչ միայն օգտագործել է, այլև նույն բաղադրիչով նաև կազմել նոր բառեր. *բաժանելի, բաժանիչ, բաժանորդ* (վերջինս ժամանակակից հայերենում դարձյալ համագործածական բառերի շարքում է): Այս կերպ *բան* բաղադրիչով կազմվել են *բանականաբար, բանակրութիւն, բանաւորիլ, այլ* բաղադրիչով՝ *այլագիծ, այլակատար, այլամազ, այլայլոտ, այլավիճակ, արտ* բաղադրիչով *արտագնացումն, արտագունել, արտածորումն, արտահոսումնարտայայտումն, արտաքարշել, արտաքսելի* նորակազմ բառերը:

Նորակազմ բառերը հեղինակի համար դարձել են միջոց՝ նորովի բացատրելու մեկնաբանվող նյութը. Այդ կերպ Տաթևացին շրջանառության մեջ է դրել, օրինակ, տասնյակից ավելի ծիսակրոնական բառեր. *անմկրտեալ, բազմաքրիստոս, ողջոյնառաք* (իմա՝ աստված), *ողջոյնընկալ* (իմա՝ Աստվածածին), *որթապաշտ, նախարարչութիւն, նախաճաշակումն,* օրինության կարգի հետ կապված՝ մի ամբողջ բառախումբ. *գե-*

ռեզմանօրինէք, դեզօրինէք, մայրօրինէք, սերմնօրինէք, քահանայօրինէք և այլն [տե՛ս նաև 13]:

Մ. Օրմանյանի «Ծիսական բառարան»-ում [12] ըստ պատշաճի հավաքված և բացատրված են ծիսական, եկեղեցական, հոգևոր երաժշտության տերմինները: Հեղինակն աշխատության 3-րդ մասում, նշել է, որ՝ «հանձն չենք առել կատարել ու ոչ հնագիտական և ոչ էլ քննադատական աշխատություն, այլ լոկ առձեռն տեղեկություններ տալ և բավարարել բարեպաշտ ժողովրդին» [ն. տ.]:

Ծիսակարգային հասկացությունները և դրանց մեկնությունները Գրիգոր Տաթևացու աշխատություններում, ոչ միայն պատկառելի թիվ են կազմում, այլև հեղինակը հավուր պատշաճի կատարել է նաև նյութի համակողմանի քննություն՝ այդ թվում վերլուծելով հեթանոսական և ազգային ծիսակարգերը, եկեղեցական տոների հիմքերը և վերաիմաստավորումները: Միայն հեղինակի «Գիրք հարցմանց»-ի «Վասն տօնից հարցումն» վերնագրով 51-րդ պրակում, որտեղ ծիսական հասկացությունները վերլուծվում են նորը հնի համադրությամբ՝ վերաիմաստավորումների պարզաբանումներով, երբեմն տրվում են նաև պատմական բացատրություններ, բերվում են «բաղարջակերք», «օրենքների տվչութիւն», «քավութիւն», «տաղաւարահարաց տօն», «նորզատիկ», «հոգւոյ գալուստ», «խաչիտօն», «եկեղեցուտօն» «պասքայ», «շաբաթապահք», «պենտակոստէ» և այլ ծիսական հասկացությունները: Այստեղ հեղինակի նորակազմ բառերի առատությունը դառնում է բացատրելի (շատաքանակ լինելու պատճառով հղումները կտրվեն տեղում):

Անմկրտեալ -չմկրտված, անկնունք: «Իսկ վերջին դժոխք, որ կոչի անջրդի գուբ, նոցա է, որ որք ոչ ունին չար և ոչ բարի, որպէս մանկունք անմկրտեալ» [1, 505]: ՄՀԲ-ն հղում է Տաթևացու «Գիրք քարոզութեան» Ամառան հատորին:

Բազմամայր «բազմաց, շատերի մայր». «Տասներորդ, բազմամայր եղև Սառա ըստ նահապետացն. բազմամայր է և կոյսն ըստ հավատացելոցն. բազմամայր է և եկեղեցի ըստ վերածնելոցն» [1, 307]: ՄՀԲ-ն հղում է Տաթևացուն:

Ողջոյնառաքն - Ողջույնը առաքող, հղող: Բառը կարելի է գրանցել որպես «աստուած» բառի հոմանիշ. «Նախ զի աստուած էր ողջոյնառաքն...:» [1, 464]: ՄՀԲ-ն հղում է «Գիրք հարցմանց»-ին:

Ողջոյնընկալն «ողջույնը ստացող, ընդունող» Եթե «*Ողջոյն առաքն*» աստված էր, ապա «*Ողջոյն ընկալն*» Տիրամայրն է. «Զի կոյս էր ողջոյն ընկալն և գերազանց քան զամենայն կոյս...» [ն. տ.]: ՄՀԲ-ն հղում է Տաթևացուն:

Պատկերացուցութիւն «գուշակություն ըստ մարդու դիմագծերի». «Չորեքտասաներորդ՝ պատկերացուցութիւն մարդոյն ըստ մասին» [1, 227]: ՄՀԲ-ն հղում է Տաթևացուն:

Ռամտես «գուշակ, կախարդ, հմայող». «Ապա ուրեմն ի ժամանակիս յայս ընկեր են Սավուղայ, որք սակաւ մի կարծեօք հաւանին երազոց կամ վիճակաց և ռամտեսացև այլոցն» [1, 429]: ՀԱԲ -ը բերում է Տաթևացու վկայությունը՝ «գրբաց» բացատրությամբ:

Տարէբոլոր «ննջեցյալի մահվան տարին բոլորող օրը». «Զի՞նչ է եօթնօրէքն և ամսագլուխն և *տարէբոլորն»* [1, 683]:ՄՀԲ-ն հղում է Տաթևացուն:

Օրինության կարգի հետ կապված նորակազմ բառերի բերվող շարքը հետաքրքիր է թե՛ ծիսակարգային, թե՛ պատմական տեղեկություն պարունակելու և թե՛ բառիմաստի տեղաշարժի առումով:

Գերեզմանօրինէք «գերեզմանի օրինության կարգ, որ կատարվել է Ավագ շաբաթվա ուրբաթ օրը՝ խորհրդանշելով Յիսուս Քրիստոսի գերազման դրվելն ու դժոխքի ավերումը». «Զգերեզմանս յորո՞ւմ աւուր պարտ է օրինել: Պատասխանի: Ի մեծի ուրբաթն: Զի բշաբաթին մեռելոց է և ո՛չ *գերեզմանօրինէք:* Եւ այս է խորհուրդն, զի յայնմ աւուր խաչեցաւ քրիստոս և գերեզմանք բացան և այլն: Եւ ի նոյն օրն ի գերեզման եմուտ և էջ ի դժոխս և քարոզեաց» [1, 684]: Բառն անցել է բարբառներին՝ երևույթի ընդհանրացմամբ, այսինքն՝ եթե ի սկզբանե այն բացառապես վերաբերել է զատկական Ավագ ուրբաթ օրը կատարվող գերեզմանի օրինության կարգին, հետագայում աստիճանաբար ներառել է ընդհանրապես գերեզմանի օրինության կարգը:

Դեզօրինէք «դեզի օրինության կարգ». «Այլև ունիմք զմարմնաւոր պատարագս զօրինակին. զենմունք վասն կենդանեաց և մեռելոց: Որպէս տօնականն զատկի և տէրունական տօնից: Անդ և *դեզօրինէից*: Ագապս մատաղաց և ոգէհանգիստ...» [1, 362]:

Մայրօրինէք «մայրապետության կարգ տալու օրինություն». «Զօրինութիւն կարգաւորութեանցս այսոցիկ ո՞վ է արարեալ և ո՞վ է բերեալ յազգս հայոց: ... Իսկ զկարգ *մայրօրինէից* սուրբն կիպրիանոս կարգեդո-

նացի: Որ և զուստիանէ սրբուհի կոյսն մայր արար կանանց հաւատաւորաց» [1, 658]:

Սերմնօրինէք «կալի, հնձանի, սերմի օրինության կարգ». «Ի Բ ամի թագաւորութեանն առաքեաց սուրբն իսահակ և ետ բերել *զսերմօրինէքն* զկալոյ և զհնձանին» [ն. տ.]:

Քահանայօրինէք «Քահանայի օրինության կարգ». «Իսկ վասն քահանայ օրինէիցն սուրբն սահակ է արարեալ, յառաջին ամի եպիսկոպոսութեան իւրոյ, ի նաւասարդի ամսեանն, որ օր մի էր և յիշատակ սուրբ կարապետին արար *զքահանայօրինէքն*». [ն.տ.[: ՄՀԲ-ն հղում է Տաթևացուն:

Տաթևացու երկերում բազմաթիվ և բազմազան են երաժշտական հարցադրումները: Նման հասկացությունները պայմանականորեն՝ ըստ իմաստային դաշտերի, ներկայացնելու դեպքում, կարելի է ասել դրանք գործիքների և շարականների, սաղմոսների ընդհանուր անվանումներ են: Վերջին խումբը հեղինակը բերում է համատարած գոյականական կիրառությամբ (թվաքանակով գրեթե վեց տասնյակ են), իսկ «Երեք սրբեան»-ը՝ անգամ հոլովառությամբ՝ «Երեք սրբենին»:

Երաժշտական հասկացությունների բացատրությունների մեջ նույնպես հանդիպում են նորակազմ բառեր. հետաքրքիր է *սատանագիւտ* բառը, իմաստը թելադրում է, որ խոսքը վերաբերում է սատանայի կողմից հնարելուն, սակայն անսպասելի է բացատրության մեջ նաև Դավիթ մարգարէի այդ «սատանագիւտ» հնարքը նրա դեմ օգտագործելու հանգամանքի նկարագրությունը: Հատվածից պարզ է դառնում, որ նախ՝ առաջին իսկ երաժշտական գործիքները՝ քնարն ու տավիղը, «սատանագիւտ» են, որ ստեղծվել է մարդկանց «իգացնելու», այսինքն՝ հոգեպես թուլացնելու համար, ապա, որ Դավիթ թագավորը դրանք սպասարկու դարձրեց հոգևոր երգեր կատարելուն. «Վասն է՞ր ձայն և քնար խառն էր Դաւիթի յերգս հոգւոյն» հարցին հեղինակը պատասխանում է. «Նախ՝ զի մարդն հոգի է և մարմին, ձայնիւ և ձեռօք երգէր. Զերկու մատունս ի մի լծակցեալ յօրինութիւնն աստուծոյ: Երկրորդ՝ զի *սատանայագիւտ էր քնար և տաւիղ, իգացուցանել զմարդիկ.* Խառնեաց զնոսա ի բանս հոգւոյն, զի իւր սրովն խոցեսցէ զինքն և հալածեսցէ որպէս ի սաւուղայ» [1, 641]:

Նորակազմ է նաև *կիսափոխ* բառը: Սա գիշերվա ինը ժամերի հսկումներին կատարվող «փոխերին» հաջորդող մի չև հանգստյան վեց

ժամերը կատարվող սաղմոսի մասէ. «Իսկ եկեսցէն ունի սաղմոսս Թ փոխ բոլոր. Պահապան Թ ժամուց հանապազորդ գիշերոյն: Եւ վեց *կիսափոխն*՝ յաւելեալ ժամուցն մինչ ի հանգստեանն» [1, 622]: Որևէ բառարան չունի վկայություն:

Նորակազմ բառերի մեջ զգալի թիվ են կազմում մարդուն, նրա խառնվածքին վերաբերող բառերը. *աղուեսաբարոյ, անխելամուտ, բազմակուլ, արձակաքայլ, բարեսուն, բացունչն, բռնամիտ, գիճասէր, թիւրամիտ, թխակն* և այլն:

Նորակազմ բառեր կան նաև Տաթևացու կիրառած մեծաքանակ բժշկագիտական հասկացությունների անվանումների մեջէ հիվանդությունների, բժշկության, բուժման, հոգեվիճակների, մարմնակազմության, կազմախոսության թեմաներով:

Իսկ քահանայագործելու իրավունք չունենալու հանգամանքներին վերաբերող հատվածում նորակազմ բառերի մի ամբողջ խումբ է, որտեղ ըստ էության հիվանդություններ նկարագրող հասկացություններ են. «Նախ՝ կոյրն. իսկ ի մեզ, որ մտօքն իցէ: Երկրորդ՝ բեկեալն ի գործոց բարեաց: Երրորդ՝ լեզուատն, որ է անձայնն. որք ոչ ունին զխոստովանութիւն: Չորրորդ՝ մարմառոտն. որ կաշին պատառեալ և խոց լինի, նշանակէ զխոց մեղաց: Հինգերորդ՝ քոսն. որ յայտնին է: Վեցերորդ՝ երքունոտն. սնքնոտն. անբուժն է: Եօթներորդ՝ *քածաւարին. այլամազն* խառնեալ. զանազան բարուց նշանակ: Ութերորդ՝ թաղամսաւորն. որ թաղիացեալ է միսն ի կաշին և չքերթուի. որ անորիշ է ի խառնակ կենաց: Իններորդ՝ ականջատն. որ խուլ է մտօք: Տասներորդ՝ կրճատն. որ է ագատն. անամօթն է: Մետասաներորդ՝ մալեալն, *փրեալն*. պակասն արիութեամբ: Երկոտասաներորդ՝ փոշտանկն. որ հատեալ է աղիքն և ի դուրս թափեալ. նշանակ հոգեկան ցաւոց ի մարմինն երևեալ: Այլ և ի վերայ այսր, հիւանդն և գիժն: Որ մտօքն է մոլի, և մեղօք հիւանդ, չէ ընդունելի» [1, 371]:

Հատվածի քահանայագործության արգելքի ցանկց նրանք, ըստ որի չեն կարող քահանայագործել՝ *այլամազ, սնքնոտ, փրեալ, քածաւվարի,* որոնք ևս նորակազմ են՝ համեմատությամբ վերը հիված բառարաններով.

Այլամազ «ուրիշ կամ այլ մազ» իմաստով, ՄՀԲ-ն հղում է Տաթևացուն [հմմտ. 8, 41], այլ բառարաններ չեն վկայում. Տաթևացին բառը բերում է իբրև *քածավարի* բառի հոմանիշ և երկուսի համար տալիս «զա-

նազան բարուց նշանակ» բացատրությունը, որ նշանակում է «տղամարդուն ոչ հարիր, կնաբարո»:

Սնքնոտ «որքինով, կեղով հիվանդ»: ՀԱԲ-ում բառը տեղ է գտել բացառապես Տաթևացու բառագործածության հիման վրա:

Տրեալ «ապականված». այն «տուիչ»՝ իգացող իմաստով «Հայերէն գաւառական բառարան»-ում նշվում է Պոլսի բարբառում գործածական լինելը [4, 1039]:

Քածավարի «կնաբարո»: ՀԱԲ-ը հղում է Տաթևացուն:

Հետաքրքիր են ներկայումս գործածությունից դուրս եկած կամ, այսպես կոչված, հնացած մի քանի նորակազմ բառեր, որոնք Աճառյանի բառարանում բերվում են իբրև նորագյուտ, դրանք են՝ *գաղտառ, գուրգուր:*

Գաղտառ. Աճառյանը բառը կապում է *գաղտ* «թաքուն» իմաստի հետ, ըստ որի՝ նորագիւտ բառ՝ «յետևից ծածուկ կծող շուն» իմաստով, և վկայում է «Տաթև. ամ. 250»: Տաթևացին բառը բերում է իբրև «նախանձի» հոմանիշ. «Իսկ նախանձոտն է որպէս *գաղտառ* շունն» [2, 250]:

Գուրգուր. Աճառյանը գրում է՝ «նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տաթև. ամ. 421», և համարում բնաձայն բառ, ինչպես որ մեկնում է Տաթևացին. «Եկեալ հաւ մի, նստաւ ի վերայ ծառոյն, որ զոմանք *գուրգուր* և ոմանք դռուն կոչեն և ձայնեաց՝ *գո՞ւրգո՞ւր*»: Ավելացնենք, որ հատվածը Գրիգոր Լուսավորչի դայակի կողմից նրան փախցնելն է նկարագրում, որպես և Տաթևացին փորձում է ստուգաբանել՝ *Գրիգոր* անունը [2, 421] անունը:

Նկատենք, որ նման բառերը արդյունք են հայերենին բնորոշ մտածողության, ուստի հայտնի են իբրև բառապաշարի համագործածական բառեր, օրինակ՝ *ամբողջութիւն, անմորուք, անստոյգ, արհեստական, արհեստաւոր, բաժանորդ, բացարձակապես, բացորոշ, բռնամիտ, երկխօսութիւն, մշտապէս, մսակոյտ, հակասական, հասանելի, յիշատակութիւն, յաւիտենականութիւն, նախապատրաստութիւն, ներգոյական, նշանադրութիւն, ուղղաձև, պատահական, սևամորթ, սրտային, սրտոտ, վատահամբաւ, տեսակաւորել, փոշիանալ, փոքրիշատէ, փութանցիկ* և այլն:

Գրաբարի գործածական բառարմատները խիստ կենսունակ են նաև Տաթևացու նորակազմությունների պարագայում. օրինակ՝ *բազմ*-բաղադրիչով գրաբարյան բառարանները տալիս են ավելի քան երեք հարյուրի չափով. Տաթևացին նոր բառեր կազմելիս հաճախ է դիմել այդ

բաղադրիչին՝ հավելումն գրաբարյան բառերի. *բազմաբաշխութիւն, բազմեղանակ, բազմակուլ, բազմամայր, բազմաքրիստոս* ձևերը:

Նույնն է նաև *ան-* ժխտական նախածանցի դեպքում. *անաջատութիւն, անբախելի, անբովանդակապէս, աներկչոտ, անթառամելի, անխելամուտ, անհատողութիւն, անմաշելի, անմեղր, անմկրտեալ, անուսումնապէս, անստոյգ, անվարձատրելի* և այլն:

Նոր բառեր կազմվել ըստ լեզվի ավանդական բառակազմական եղանակների՝ բառաբարդման և ածանցման՝ իրենց գրեթե բոլոր ենթակաղապարներով:

Շատ ավելի քիչ են բառակազմական առումով վիճելի նորակազմությունները, որոնցից մեկին փորձենք անդրադառնալ:

Բառակազմական կաղապարի առաջին հայացքից ոչ կանոնական գործածությունը իմաստային դաշտում հարցեր է առաջացնում, օրինակ, *ենթակայոջ* բառի դեպքում, որտեղ կարիք է առաջանում պատմական կամ տարաժամանակյա վերլուծություն կատարել: Բառը Տաթևացին օգտագործում է «ենթակայության տակ գտնվող» իմաստով՝ ածանց + ածանց + հոդակապ + հիմք + վերջավորություն կաղապարով. «Այլ ի մարմինն նիւթօրէն և սկզբնաբար. Իսկ ի հոգին տեսակաբար և իբր *ենթակայոջ*» [1, 567]: «Պարունակելի, բաղկացական, ենթակայության տակ, ենթակայության ներսում գտնվող» իմաստով այս բառը բերում է միայն Երեմիա Մեղրեցին *ենթակայում*՝ ձևով, և կասկած չկա, որ այստեղ գործ ունենք *«նի + ենթակայութիւն»* կառույցի հետ, այսինքն՝ ենթակայության տակ, ենթակայության մեջ, ենթակայության ներսում գտնվող, հատկապես, որ ենթակայ նշանակում է նաև «տակը եղած». Այլ հարց է, որ Երեմիա Մեղրեցին *ենթակայում*՝ ձևը համարում է պարառական հոլովաձև՝ հաշվի չառնելով բերվող օրինակի ներգոյական հոլովաձևը:

Եզակի այս գործածությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ Տաթևացու օրերում դեռ շարունակել է կենսական մնալ *նի* հնագույն նախածանցը՝ «ներս, տակ, ներսում» նշանակությամբ: Նկատենք նաև, որ նախածանցը մեր օրերում գործածական է հայերենի մի շարք բարբառներում[1]:

Մեկ այլ դեպքում, Տաթևացին շինականի կողմից նշվող երեխայի

[1] Հունաբան կազմություն է , որ անցել է նաև լատինաբան հայերենին և տեղ գտել այլ կարգի գրական հուշարձաններում (Ծանոթ. խմբ.):

ծննդյան օրը կոչում է *տղարուք.* Հ. Աճառյանը վկայակոչում է Տաթևացուն. «*տղարուք* (չունի ԱԲ) որդու ծննդեան տօնը» Տաթև. հարց. 321» [5; 412], սակայն չի տալիս բառի բացատրությունը. հատվածը հետևյալն է. «Նա՛խ՝ որպէս հասարակ շինական քի ծննդեան զաւակաց զմին օրն պատուեն տղարուք կոչելով» [1; 321]: Մեր կարծիքով, բառը նշանակում է «երեխաներ»: Նկատենք, նաև, որ հատվածը պարունակում է տեղեկատվություն ազգագրական թերևս մոռացված մի արարողակարգի մասին, երբ տարվա մեջ մեկ անգամ նշվել է տան բոլոր զավակների օրը: Այն, որ դա կատարվել է շուքով, հուշում է «պատուել» բառը:

Այսպիսով, Գրիգոր Տաթևացու կերտած նորակազմ բառերը հիմնականում ծիսակրոնական, երաժշտական, մարդաբանական, բժշկագիտական ոլորտից են, որոնցից ժամանակակից հայերենում գործածվում են *անստոյգ, արհեստական, երկխօսութիւն, բռնամիտ, թխակն, պատահական, սևամորթ, սրտային, սրտոտ, ուղղաձև, վատահամբաւ, քահանայօրհնէք* և այլ բառեր: Հեղինակային եզակի գործածությամբ են մնացել *աղուեսաբարոյ, սատանայագիւտ* և մի շարք այլ նորակազմ բառեր, որոնք բավականին հաջողված են հայերենի մտածողության առումով, սակայն հետագա գործածություն չեն ստացել:

Գրականության ցանկ

1. Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց. Կ.Պոլիս, 1729:

2. Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր, Կ.Պոլիս, 1741:

3. Աճառեան Հ., Հայերէն նոր բառեր հին մատենագրութեան մէջ, հ.Ա, Բ, Վենետիկ, 1913:

4. Աճառեան Հ., Հայերէն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913:

5.Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հհ. Ա-Դ, Ե., 1971-1979:

6. Աւետիքեան Գ., Սիւրմէլեան Խ., Աւգերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հհ. 1-2, Վենետիկ, 1836-1837:

7. Հովհաննիսյան Լ., Գրաբարի բառարան. նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր,հ. Ե., 2010:

8. Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, Ե., 2009:

9. Ղազարյան Ռ., Գրաբարի հոմանիշների բառարան, Ե.2006:
10. Մալխասեանց Ս., Հայերէն բացատրական բառարան, հ. 1-4, Ե., 1944-45:
11. Մեղրեցի Ե., Բառգիրք հայոց, Ե., 1975:
12. Մ. Արք. Օրմանյան, Ծիսական բառարան, Ե., 1992:
13. Գրիգորյան Ս., Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի նորակազմ բառերի քննություն, Ե.2014: